



ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳԻՐ ԼՐԱՑՈՒՄ

«ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Թողարկողի ֆիրմային անվանումը, կազմակերպաիրավական ձևը
Հայաստանի Հանրապետություն, 0010, ք.Երևան, Հանրապետության հրապարակ,
Վազգեն Սարգսյան 26/1
հեռ. (+374 10) 511-211
էլ.փոստ՝ post@conversebank.am
ինտերնետային կայք՝ www.conversebank.am

«ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Գլխավոր տեղաբաշխողի անվանումը, կազմակերպաիրավական ձևը
Հայաստանի Հանրապետություն, 0010, ք.Երևան, Հանրապետության հրապարակ,
Վազգեն Սարգսյան 26/1
հեռ. (+374 10) 511-211
էլ.փոստ՝ post@conversebank.am
ինտերնետային կայք՝ www.conversebank.am

**ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ԱԶԴԱԳՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ ՉԻ ՀԱՎԱՍՏՈՒՄ
ՆԵՐԴՐՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆԸ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ
ՃՇՏՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՄ ԻՍԿՈՒԹՅՈՒՆԸ**

Արժեթղթերի տեսակը՝	Անվանական, արժեկտրոնային պարտատոմս
Արժեթղթերի ձևը՝	Ոչ փաստաթղթային
Արժեթղթերի անվանական արժեքը՝	100 (Մեկ հարյուր) ԱՄՆ դոլար, 50,000 (Հիսուն հազար) ՀՀ դրամ

Արժեթղթերի թողարկման ընդհանուր քանակը՝	150,000 (Հարյուր հիսուն հազար) հատ ԱՄՆ դոլարով, 200,000 (Երկու հարյուր հազար) հատ ՀՀ դրամով
Արժեթղթերի թողարկման ընդհանուր ծավալը՝	15,000,000 (Տասնհինգ միլիոն) ԱՄՆ դոլար, 10,000,000,000 (Տաս միլիարդ) ՀՀ դրամ
Արժեթղթերի յուրաքանչյուր տրանշի տեղաբաշխման ծավալը՝	Ենթակա է որոշման Բանկի Տնօրինության կողմից՝ յուրաքանչյուր տրանշի համար
Արժեթղթերի յուրաքանչյուր տրանշի տեղաբաշխման քանակը՝	Համապատասխան յուրաքանչյուր տրանշի ծավալի և անվանական արժեքի
Արժեթղթերի արժեկտրոնի տարեկան եկամտաբերությունը՝	Ենթակա է որոշման Բանկի Տնօրինության կողմից՝ յուրաքանչյուր տրանշի համար
Արժեթղթերի շրջանառության ժամկետը՝	Ենթակա է որոշման Բանկի Տնօրինության կողմից՝ յուրաքանչյուր տրանշի համար
Արժեկտրոնների վճարման հաճախականությունը՝	Ենթակա է որոշման Բանկի Տնօրինության կողմից՝ յուրաքանչյուր տրանշի համար
Տեղաբաշխման ձևը՝	Չերաշխավորված

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԻՆՔ	5
ԲԱԺԻՆ 1. ԱՄՓՈՓԱԹԵՐԹ	8
1.1. Բանկի և բանկի գործունեության վերաբերյալ համառոտ տեղեկատվություն	8
1.1.1. Բանկի տվյալները և կապի միջոցները	8
1.1.2. Բանկի հիմնադրումը և համառոտ պատմությունը	9
1.1.3. Աշխարհագրական տեղաբաշխվածությունը	10
1.1.5. Զբաղեցրած դիրքը բանկային համակարգում (31.12.2023 դրությամբ)	11
1.1.6. Բանկի առաքելությունը, տեսլականը և հիմնարար արժեքները	11
1.1.7. Բիզնեսի նկարագիրը	13
1.1.8. Բանկի ռազմավարությունը	17
1.1.9. Ակտիվների որակը	18
1.2. Թողարկողին և պարտատոմսերին առնչվող ռիսկերի համառոտ նկարագիրը	19
1.2.1. Թողարկողին առնչվող ռիսկերի համառոտ նկարագիրը	19
1.2.3. Բանկի կանոնադրական կապիտալը	21
1.2.2. Պարտատոմսերին առնչվող ռիսկերի համառոտ նկարագիրը	22
1.3. Բանկի տնտեսական գործունեության զարգացման և ֆինանսական վիճակի փոփոխության միտումները	23
1.4. Համառոտ տեղեկություններ Բանկի աուդիտն իրականացնող անձանց մասին	24
1.5. Բանկի կառավարման մարմինների կազմի վերաբերյալ տեղեկատվություն	24
1.5.1. Բանկի բաժնետերերը	24
1.5.2. Բանկի կառավարման մարմինները	26
1.6. Առաջարկվող պարտատոմսերի հիմնական վիճակագրական տվյալները	27
1.7. Պարտատոմսերի առաջարկի ծրագրի համակողմանի նկարագիրը	29
1.8. Այլ էական տեղեկություններ	29
1.9. Ամփոփ ֆինանսական տվյալներ	30
ԲԱԺԻՆ 3. ԲԱՆԿԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ	33

3.8. Բանկի կառավարման մարմինները և կառավարման մարմինների անդամները 33

3.8.2. Տեղեկություններ թողարկողի կառավարմանը մասնակցող յուրաքանչյուր անձի
վերաբերյալ 33

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԻՆՔ

Մենք՝ ստորագրող անձինք, հավաստիացնում ենք, որ գործադրել ենք բոլոր ողջամիտ ջանքերը, որպեսզի պարզենք ներառված տեղեկությունների ճշգրիտ և լիարժեք լինելը: Ըստ այդմ, մենք հավաստիացնում ենք, որ մեր լավագույն տեղեկացվածության համաձայն ազդագրում ներառված տեղեկությունները ճշգրիտ և լիարժեք են, չեն պարունակում բացթողումներ, որոնք կարող են խեղաթյուրել ազդագրի բովանդակությունը:

Ստորագրող անձինք



Մարտելո Վենդե

«Կոնվերս Բանկ» ՓԲԸ Խորհրդի նախագահ

22.11.2024

(ամսաթիվ)



Արսեն Գամաղելյան (Տեր Հովել քահանա)

«Կոնվերս Բանկ» ՓԲԸ Խորհրդի անդամ

22.11.2024

(ամսաթիվ)

Դանիել Գիլերմո Սիմոնուտի

«Կոնվերս Բանկ» ՓԲԸ Խորհրդի անդամ

22.11.2024

(ամսաթիվ)

Մարտին Ֆրանցիսկո Էռնեսկյան

«Կոնվերս Բանկ» ՓԲԸ Խորհրդի անդամ

22.11.2024

(ամսաթիվ)



Պեղրո Միգել Վալս
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ Խորհրդի անդամ

20.11.2024


(ամսաթիվ)



Անդրանիկ Գրիգորյան
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ
Գլխավոր գործադիր տնօրեն,
Տնօրինության նախագահ

22.11.2024

(ամսաթիվ)



Քրանտ Հակոբյան
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ
Գլխավոր գործադիր տնօրենի տեղակալ,
Ֆինանսական դեպարտամենտի տնօրեն,
Տնօրինության անդամ

22.11.2024

(ամսաթիվ)



Գրիգորի Զաքարյան
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ Ներդրումային
դեպարտամենտի տնօրեն,
Տնօրինության անդամ

22.11.2024

(ամսաթիվ)



Դավիթ Ազատյան
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ
Հաշվապահական հաշվառման վարչության պետ,
Գլխավոր հաշվապահ,
Տնօրինության անդամ

22.11.2024

(ամսաթիվ)



Վահագն Մելիք-Փարսադանյան
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ Ռիսկերի

22.11.2024

(ամսաթիվ)

դեպարտամենտի տնօրեն,
Տնօրինության անդամ



Արթուր Արսիթայան
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ
Գործառնական դեպարտամենտի տնօրեն,
Տնօրինության անդամ

22.11.2024


(ամսաթիվ)



Բենիամին Թադևոսյան
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ
ՏՏ և թվայնացման դեպարտամենտի տնօրեն,
Տնօրինության անդամ

22.11.2024

(ամսաթիվ)



Սարգիս Խաչատրյան
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ
Կորպորատիվ դեպարտամենտի տնօրեն,
Տնօրինության անդամ

22.11.2024

(ամսաթիվ)



Արամ Բադյան
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ
Մանրաձախ բիզնեսի գծով տնօրեն,
Տնօրինության անդամ

22.11.2024

(ամսաթիվ)

ԲԱԺԻՆ 1. ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

Սույն ամփոփաթեթը դիտվում է որպես ազդագրի ներածական համառոտ նկարագրություն և առաջարկվող արժեթղթերում ներդրում անելու վերաբերյալ ներդրողի որոշումը պետք է հիմնված լինի ամբողջական ազդագրի վրա:

Ամփոփաթեթում պարունակվող տեղեկատվության ոչ ամբողջական կամ ապակողմնորոշիչ լինելու դեպքում (այդ թվում նաև թարգմանությանը վերաբերող մասով) ամփոփաթեթի կազմման համար պատասխանատու անձինք կրում են քաղաքացիական պատասխանատվություն, եթե այն ոչ ամբողջական կամ ապակողմնորոշիչ է ազդագրի մյուս մասերի հետ դիտարկելու դեպքում:

Ներդրողը կարող է ձեռք բերել սույն փաստաթուղթը և դրան կից փաստաթղթերը թղթային տարբերակով Բանկի Գլխավոր գրասենյակում, իսկ էլեկտրոնային տարբերակով՝ Բանկի ինտերնետային կայքում՝ www.conversebank.am:

1.1. Բանկի և բանկի գործունեության վերաբերյալ համառոտ տեղեկատվություն

1.1.1. Բանկի տվյալները և կապի միջոցները

Բանկի լրիվ ֆիրմային անվանումն է՝

հայերեն՝ «Կոնվերս Բանկ» փակ բաժնետիրական ընկերություն
ռուսերեն՝ закрытое акционерное общество “Конверс Банк”
անգլերեն՝ “Converse Bank” closed joint-stock company

Բանկի կրճատ ֆիրմային անվանումն է՝

հայերեն՝ «Կոնվերս Բանկ» ՓԲԸ
ռուսերեն՝ ЗАО “Конверс Банк”
անգլերեն՝ “Converse Bank” CJSC

Բանկի պետական գրանցման վայրն է՝

ՀՀ, 0010, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, Վազգեն Սարգսյան 26/1
Բանկի պետական գրանցման համարն է 57:

Բանկի գտնվելու վայրն է՝

ՀՀ, 0010, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, Վազգեն Սարգսյան 26/1

Կապի միջոցները՝

հեռ.՝ (+374 10) 511-211

ֆաքս՝ (+374 10) 511-212

էլ. Փոստ՝ post@conversebank.am,

Ինտերնետային կայք՝ www.conversebank.am :

Բանկի հիմնադրման երկիրը՝

Հայաստանի Հանրապետություն:

Ընկերության կազմակերպատիրական ձևը՝

փակ բաժնետիրական ընկերություն (գրանցված 20.12.1993թ.):

Պարտատոմսերում ներդրումների հետ կապված հարցերի դեպքում ներդրողները կարող են կապ հաստատել Կոնվերս Բանկի Ներդրումային դեպարտամենտի Կորպորատիվ և ներդրումային բանկային ծառայությունների բաժնի համապատասխան աշխատակիցների հետ՝ հետևյալ հեռախոսահամարներով.

(+374 10) 511-211 (ներքին) 2449 կամ 2454, էլ հասցե. KarimyanElen@conversebank.am,
YeghiazaryanEmilia@conversebank.am, corpinvest@conversebank.am:

1.1.2. Բանկի հիմնադրումը և համառոտ պատմությունը

Բանկը փաստացի գործունեությունը սկսել է 1993 թվականից և 30 տարի գործունեություն է ծավալում ՀՀ բանկային շուկայում:

Բանկը գրանցվել է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից 1993թ. դեկտեմբերին և հանդիսանում է «Հյուսիս-հայկական» փայտտիրական բանկի իրավահաջորդը:

Որպես «Կոնվերս Բանկ» փակ բաժնետիրական ընկերություն Բանկը վերակազմավորվել է 1997թ.-ին: Բանկն ունի ՀՀ ԿԲ կողմից տրված բանկային գործունեության թիվ 57 լիցենզիա:

«Կոնվերս Բանկ» փակ բաժնետիրական ընկերությունը գրանցվել է ՀՀ, 0010, ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Վազգեն Սարգսյան 26/1 հասցեում, իսկ գրանցող մարմին է հանդիսանում Հայաստանի Հանրապետության Կենտրոնական Բանկը (Այսուհետ՝ ՀՀ ԿԲ):

Բանկի ֆիրմային անվանումը պաշտպանված է ՀՀ նորմատիվ իրավական ակտերով և գրանցված է ՀՀ արտոնագրային վարչությունում (ֆիրմային անվանման գրանցման մասին 03.06.1999թ. որոշում, գրանցման համարը 107913):

Բանկի ապրանքային նշանն է՝



Բանկի հիմնադիր և հիմնական բաժնետեր է հանդիսանում «Ըղվանսդ Գլոբալ Ինվեսթմենթս» ԷԼԼՍԻ-ն:

1.1.3. Աշխարհագրական տեղաբաշխվածությունը

31.12.2023թ. դրությամբ Բանկն ունի 33 մասնաճյուղ, որոնք տեղաբաշխված են ՀՀ 9 մարզերում և Երևան քաղաքում:

Բանկի մասնաճյուղերի աշխարհագրական տեղաբաշխվածությունը:

Մարզեր և քաղաքներ	Մասնաճյուղերի քանակը
Կոտայք	5
Լոռի	1
Սյունիք	1
Շիրակ	3
Տավուշ	2
Արմավիր	3
Արարատ	1

Արագածոտն	1
Գեղարքունիք	1
Երևան	15
ԸՆԴԱՄԵՆԸ	33

Մասնաճյուղերի ցանկը ներկայացված է Հավելված 5-ում:

1.1.5. Զբաղեցրած դիրքը բանկային համակարգում (31.12.2023 դրությամբ)

31.12.2023թ. դրությամբ բանկերի կողմից հրապարակվող ֆինանսական հաշվետվությունների տվյալների հիման վրա հաշվարկված ֆինանսական ցուցանիշներով Բանկը ՀՀ բանկային համակարգում գտնվում է ստորև նշված դիրքերում՝

- Ակտիվների մեծությամբ՝ 6-րդ տեղում՝ 506.76 մլրդ դրամ կամ համակարգի 5.5%:
- Պարտավորությունների մեծությամբ՝ 6-րդ տեղում՝ 431.06 մլրդ դրամ կամ համակարգի 5.6%:
- Վարկային պորտֆելի մեծությամբ՝ 7-րդ տեղում՝ 271,8 մլրդ դրամ կամ համակարգի 5.4%:
- Հաճախորդների նկատմամբ պարտավորությունների ցուցանիշով՝ 6-րդ տեղում՝ 360.25 մլրդ դրամ կամ համակարգի 6.5%:
- Զուտ շահույթի մեծությամբ՝ 6-րդ տեղում՝ 14.6 մլրդ դրամ կամ համակարգի 6.4%:
- Ընդհանուր կապիտալի մեծությամբ՝ 6-րդ տեղում՝ (75.7մլրդ դրամ կամ համակարգի 5.1%):

1.1.6. Բանկի առաքելությունը, տեսլականը և հիմնարար արժեքները

Առաքելություն և կարգախոս

Մենք հավատում ենք, որ պետության և հասարակության ուժն ընտանիքի, նրա միասնության և փոխօգնության մեջ է: Կոնվերս Բանկն աջակցում է ընտանիքներին՝

զարգացնելու ֆինանսական պոտենցիալը, ձեռք բերելու ֆինանսական անկախություն և կայունություն:

Մեր կարգախոսն է. «Վստահված սերունդների կողմից»:

Տեսլական

Հաճախորդների համար դառնալ առաջին նախընտրության թվային բանկը Հայաստանում՝ նորագույն տեխնոլոգիաների ներդրմամբ ստեղծելով և մատուցելով հարմարավետ, պարզ և հասանելի բանկային ծառայություններ՝ ժամանակակից աշխարհի պահանջներին համապատասխան:

Հիմնարար արժեքներ

Պատասխանատվություն և ազնվություն

Բանկը՝ առաջնորդվելով ազնվության, պատասխանատվության և թափանցիկության սկզբունքով՝ վստահություն է ձևավորում հաճախորդների, գործընկերների և աշխատակիցների հետ՝ երաշխավորելով, որ յուրաքանչյուր փոխգործակցություն արտացոլում է բարոյական և մասնագիտական վարքագծի ամենաբարձր չափանիշները:

Հաշվետվողականություն

Հաշվետվողականությունը հաճախորդների և աշխատակիցների հանդեպ Բանկի ստանձնած պարտավորության հիմնաքարն է: Հաճախորդների համար դա նշանակում է կատարել խոստումները, ապահովել ֆինանսական անվտանգությունը և օգնել նրանց հասնել նպատակներին: Աշխատակիցների համար դա նշանակում է ստեղծել աշխատանքային միջավայր, որտեղ հաշվետվողականությունը խրախուսվում և պարգևատրվում է:

Հասանելիություն

Բանկը պատրաստակամ է ապահովել հասանելիություն իր բոլոր իմաստներով: Սա մի կողմից նշանակում է մատուցվող ծառայությունների պարզություն, հարմարավետություն և դրանց հասանելիությունը հաճախորդների համար, մյուս կողմից՝ աշխարհագրական հասանելիություն, մեկ այլ իմաստով՝ հասանելի աշխատակիցների համար՝ աշխատանքի տարբեր փուլերում և գործընթացներում:

Համագործակցություն

Համագործակցությունը Բանկին թույլ է տալիս կառուցել երկարաժամկետ կայուն հարաբերություններ ինչպես հաճախորդների, այնպես էլ գործընկերների հետ: Այս

համատեքստում Բանկը նպատակաուղղված է ապահովել ամուր ֆինանսական փոխգործակցություն, որակյալ տեխնիկական աջակցություն և ծրագրերի անխափան աշխատանք:

Շարունակական աճ

Բանկը մշտապես պատրաստ է զարգանալու, աճելու և գտնելու լավագույն լուծումներ ինչպես հաճախորդների և գործընկերների, այնպես էլ աշխատակիցների համար:

1.1.7. Բիզնեսի նկարագիրը

«Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ն ՀՀ բանկային համակարգում դիրքավորված է և գործունեությունը ծավալում է որպես ունիվերսալ բանկ՝ կարևորելով թե՛ մանրածախ, թե՛ կորպորատիվ, թե՛ ներդրումային բիզնեսի զարգացումը՝ բանկային ծառայությունների ստեղծման և մշակման հիմքում դնելով յուրաքանչյուր հաճախորդի և աշխատակցի հարմարավետությունը, ծառայությունների պարզությունն ու հասանելիությունը:

Բանկի բիզնես մոդելի հիմքում դրված է «թվայինը՝ որպես առաջնահերթություն» գաղափարը, որի ներքո Բանկը կարևորում է գործունեության բոլոր ոլորտներում լայնամասշտաբ թվային տրանսֆորմացիայի իրականացումը և թվային էկոհամակարգի ձևավորումը:

Այս գործընթացներն իրենց արտացոլումն են գտնում ինչպես հաճախորդներին մատուցվող թվային ծառայությունների ավելացմամբ, այնպես էլ Բանկի ներքին գործընթացներում՝ կատարելագործելով, պարզեցնելով և արդիականացնելով գործընթացները՝ ներդնելով տեխնոլոգիական այնպիսի գործիքակազմ և լուծումներ, որոնք և՛ կարճաժամկետ, և՛ երկարաժամկետ հեռանկարում կապահովեն Բանկի որակական զարգացման համար հիմնարար ու կայուն հիմքեր և նախադրյալներ:

Բանկի էական բիզնես ուղղությունները ներկայացված են ստորև:

Բիզնես ուղղություն	Մատուցվող ծառայություններ
Մանրածախ բիզնես	Վարկեր՝ այդ թվում հիպոտեկային, սպառողական, օվերդրաֆտներ


	• Բանկային հաշիվներ, քարտեր, ժամկետային ավանդներ, պարտատոմսեր • Տրանզակցիոն բիզնես ծառայություններ • Այլ մանրածախ բանկային ծառայություններ
Կորպորատիվ բիզնես	• Վարկեր՝ այդ թվում հիմնական և շրջանառու միջոցների ձեռքբերման համար, • Լիզինգ, ֆակտորինգ, • Առևտրի ֆինանսավորում, • Բանկային հաշիվներ, քարտեր, ժամկետային ավանդներ, պարտատոմսեր • Տրանզակցիոն բիզնես ծառայություններ • Այլ կորպորատիվ ֆինանսական ծառայություններ
Ներդրումային բիզնես	• Բրոքերային ծառայությունների մատուցում • Ակտիվների և հարստության կառավարում և խորհրդատվության տրամադրում • Ներդրումային բանկային պրոդուկտների նախագծում և խորհրդատվության մատուցում • Այլ ֆինանսական ծառայություններ

Մանրածախ բիզնես

Բանկը՝ կարևորելով ֆիզիկական անձանց մատուցվող բանկային ծառայությունների զարգացումը, ինչպես նաև հիմք ընդունելով այս համատեքստում նախորդ տարիներին արձանագրած փաստացի արդյունքները՝ որպես էական ուղղություն է դիտարկում մանրածախ բիզնեսը: 2023 թվականի արդյունքներով Բանկն ապահովել է մոտ 163 մլրդ

դրամի մանրածախ վարկային պորտֆել, ինչը նախորդ տարվա համեմատ աճել է 23.9%-ով: Բանկի մանրածախ վարկային պորտֆելի կառուցվածքը ներկայացված է Գծապատկեր 1-ում:

Գծապատկեր 1. Մանրածախ վարկային պորտֆելի կառուցվածքը, 2021-2023թթ., մլրդ դրամ



Բանկում մանրածախ բիզնեսի զարգացման առանցքային ուղղություններն են.


- Բանկային հաշվի ծառայություն, ժամկետային ավանդ
- Ռիսկի վրա հիմնված եկամտաբերությամբ վարկային պորտֆելի աճ
- Մասնաճյուղերի արդյունավետության բարձրացում, գործառույթների/գործընթացների օպտիմալացում
- Թվային բանկային ծառայություններ

Կորպորատիվ բիզնես

Բանկը կարևորում է իրավաբանական անձանց մատուցվող բանկային ծառայությունների ընդլայնումն ու զարգացումը: Հիմք ընդունելով այս համատեքստում նախորդ տարիներին արձանագրած փաստացի արդյունքները՝ Բանկն իր գործունեության էական ուղղություն է դիտարկում նաև կորպորատիվ բիզնեսը:

2023 թվականի արդյունքներով Բանկն ապահովել է մոտ 109 մլրդ դրամի կորպորատիվ վարկային պորտֆել, ինչը նախորդ տարվա համեմատ աճել է 18.6%-ով: Բանկի կորպորատիվ վարկային պորտֆելի կառուցվածքը ներկայացված է Գծապատկեր 2-ում:

Գծապատկեր 2. Կորպորատիվ վարկային պորտֆելի կառուցվածքը, 2021-2023թթ., մլրդ դրամ



Բանկում կորպորատիվ բիզնեսի զարգացման առանցքային ուղղություններն են.

- ՓՄՁ վարկավորում
- Խոշոր բիզնեսի վարկավորում

Ներդրումային բիզնես

2023 թվականին Բանկը շարունակեց զարգացնել դեռևս 2022-ին որդեգրած ներդրումային քաղաքականությունը: Այն է՝ ներդրումային բանկային ծառայությունների ոլորտը որպես բիզնես առաջնահերթություն ընտրելու ցուցիչը:

Տվյալ ոլորտում իր ակտիվության շնորհիվ Բանկը գրեթե կրկնապատկել է ակտիվներում ներդրումային պորտֆելի (ներառյալ ռեպո գործարքները) տեսակարար կշիռը՝ հասցնելով 30.6%-ի: Բանկն ակտիվ է եղել նաև կապիտալի շուկաներում՝ թե՛ իր պարտքի թողարկման և տեղաբաշխման, թե՛ ֆինանսական այլ մասնակիցների արժեթղթերի շուկային խորություն ապահովելու առումով: Էականորեն ավելացել է նաև գործառնական եկամտի մեջ առևտրային եկամուտների տեսակարար կշիռը՝ հասնելով 23.1%-ի, իսկ ներդրումային գործառնություններից ստացված տոկոսային եկամուտները կազմել են տոկոսային եկամուտների 28.5%-ը:

Բանկը շարունակելու է այս ոլորտում իր որդեգրած ռազմավարությունը, որը հիմնված է լինելու սեփական ներդրումային պորտֆելի կառավարման արդյունավետության բարձրացման, իրացվելիության տեղաբաշխման համար նոր միջազգային գործիքակազմի կիրառման, հաճախորդներին կապիտալի շուկաներում առաջարկվող ներդրումային

պրոդուկտների տեսականու ընդլայնման և ակտիվների կառավարման գործառույթի ներդրման վրա:

1.1.8. Բանկի ռազմավարությունը

«Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ն ՀՀ բանկային համակարգում դիրքավորված է և գործունեությունը ծավալում է որպես ունիվերսալ բանկ՝ կարևորելով թե՛ մանրածախ, թե՛ կորպորատիվ, թե՛ ներդրումային բիզնեսի զարգացումը: Բանկի բիզնես մոդելի հիմքում դրված է «թվայինը՝ որպես առաջնահերթություն» գաղափարը, որի ներքո Բանկը կարևորում է գործունեության բոլոր ոլորտներում լայնամասշտաբ թվային տրանսֆորմացիայի իրականացումը և թվային էկոհամակարգի ձևավորումը:

Հաշվի առնելով Բանկի առաքելությունն ու տեսլականը, բաժնետերերի ու հաճախորդների շահերը, և ռիսկերի ու շահութաբերության միջև հավասարակշռությունը՝ Բանկը սահմանել է հինգ ռազմավարական առաջնահերթություններ, և դրանց սպասարկող միջնաժամկետ նպատակներ:

Բանկի էական բիզնես ուղղությունների զարգացում

- Աճեցնել բիզնեսի ծավալները՝ բարելավելով և ամրապնդելով դիրքերը լավագույն հնգյակում
- Բարելավել մատուցվող ծառայությունների որակը
- Ընդլայնել հաճախորդների բազան

Բանկի թվայնացման մակարդակի բարելավում

- Զարգացնել Բանկի թվային հարթակները
- Ընդլայնել մոբայլ հավելվածի ամսական ակտիվ օգտատերերի (MAU) քանակը
- Բարելավել Բանկի կողմից առաջարկվող հիմնական ծառայությունների Offloading Ratio-ները
- Ընդլայնել գործընթացների ավտոմատացված համակարգերի կիրառությունը

Հաճախորդների գերազանց և անխափան սպասարկում

- Բարելավել հաճախորդների սպասարկման որակը բոլոր տեսակի գործառնություններում
- Ապահովել թվային ուղիների հասանելիության հնարավոր առավելագույն մակարդակ

- Պարզեցնել և օպտիմալացնել գործընթացները

Կայուն շահութաբերության ապահովում և գործառնական արդյունավետության բարելավում

- Ապահովել ըստ կապիտալի շահութաբերության առնվազն 15.0% մակարդակ
- Զարգացնել և դիվերսիֆիկացնել եկամուտների աղբյուրները
- Ապահովել ծախսերի արդյունավետ վերահսկում և օպտիմալացնել Բանկի գործառնական արդյունավետությունը
- Ներքին գործընթացների ավտոմատացման շնորհիվ ավելացնել Բանկի ընդհանուր արդյունավետությունը
- Բարձրացնել ռիսկերի կառավարման արդյունավետությունը

Բնապահպանական, սոցիալական և կառավարման միջազգային պահանջներին ու չափորոշիչներին Բանկի քաղաքականության համապատասխանեցում

- Բարելավել Բանկի կորպորատիվ սոցիալական պատասխանատվության և բնապահպանական ռիսկերի կառավարման քաղաքականությունը և ընթացակարգերը
- Ինտեգրել միջազգային ֆինանսական ինստիտուտների ամենանախընտրելի մոդելները
- Ներդնել կորպորատիվ, բնապահպանական և սոցիալական նախագծեր

1.1.9. Ակտիվների որակը

Ակտիվների համարժեքությունը. Համաձայն աուդիտ անցած տվյալների, 2023թ. Բանկի զուտ շահույթը կազմել է 14,623.7 մլն ՀՀ դրամ, իսկ կապիտալի շահութաբերությունը (զուտ շահույթի հարաբերությունը կապիտալի միջին մեծությանը)՝ 21.2%: Ընդհանուր կապիտալի հարաբերությունն ընդհանուր ակտիվներին կազմել է 14.94%:

Ակտիվների որակը. 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի համախառն վարկային պորտֆելը կազմել է 278.84 մլրդ ՀՀ դրամ: Բանկի կողմից առաջարկվող վարկային պրոդուկտները առավել մրցունակ դարձնելու նպատակով, սկսած 2016 թվականից շարունակական վերանայվում են ինչպես ֆիզիկական, այնպես էլ իրավաբանական անձանց վարկերի տրամադրման պայմաններն ու վարկերի տրամադրման գործընթացը: Վերջիններիս կիրառման, և Բանկի՝ շուկայում զբաղեցրած դիրքի, վարկավորման ներուժի ամբողջական օգտագործման արդյունքում իրատեսական են վարկավորման ծավալների աճի նախանշված նպատակները: Միաժամանակ մեծ ուշադրություն է դարձվում պորտֆելի որակի

կառավարմանը: Վարկերը տրամադրվում են այն հաճախորդներին, ովքեր բավարարում են Բանկի կողմից սահմանված չափանիշներին:

Ակտիվների իրացվելիությունը. Բանկի նպատակն է ապահովել ֆինանսավորման աղբյուրների կայուն և տարբերակված կառուցվածք, ինչը կապահովի իրացվելիության չկանխատեսված պահանջների արագ և քիչ ծախսատար ապահովումը: ՀՀ ԿԲ իրացվելիության նորմատիվները հետևյալն են (հաշվետու ժամանակաշրջանի վերջին ամսվա միջին ցուցանիշ)՝

Նորմատիվներ	ՀՀ ԿԲ սահմանած մեծություններ	Փաստացի մեծություն	Փաստացի մեծություն	Փաստացի մեծություն
		2023	2022	2021
Ն ₂ ^{1*}	15%	44.42%	46.92%	38.04%
Ն ₂ ^{2**}	60%	114.60%	106.22%	105.50%

* Բանկի բարձր իրացվելի ակտիվների և ընդհանուր ակտիվների նվազագույն հարաբերակցություն

** Բանկի բարձր իրացվելի ակտիվների և ցպահանջ պարտավորությունների նվազագույն հարաբերակցություն

1.2. Թողարկողին և պարտատոմսերին առնչվող ռիսկերի համառոտ նկարագիրը

1.2.1. Թողարկողին առնչվող ռիսկերի համառոտ նկարագիրը

Թողարկողին առնչվող ռիսկերի մանրամասն նկարագրությունը կարող եք տեսնել Ծրագրային ազդագրի 3.2 կետում:

Բարձր մրցակցության մակարդակ. Բանկային ոլորտին բնորոշ է բարձր մրցակցությունը, հետևաբար շուկայում մրցակիցների ակտիվության բարձրացումը կարող է բացասաբար անդրադառնալ Թողարկողի տնտեսական և ֆինանսական ցուցանիշների վրա:

Վարկային ռիսկ. Բանկի գործունեությունն ենթարկվում է վարկային ռիսկի՝ կապված վարկառուի կողմից պարտավորության չկատարման հետ, որի արդյունքում Բանկը կարող է վնասներ կրել: Վարկային ռիսկը Բանկի կարևորագույն ռիսկն է, այդ պատճառով էլ Բանկն այն առանձնակի ուշադրությամբ է վերահսկում:

Գործառնական ռիսկ. Գործառնական ռիսկ է համարվում ոչ ադեկվատ կամ սխալ ներքին գործընթացների, մարդկային գործոնի, համակարգերի և արտաքին միջավայրի ազդեցության հետևանքով կորուստի առաջացման հավանականությունը կամ առաջացած ուղղակի կորուստը, որը բացասական ազդեցություն կունենա բանկի կապիտալի և շահույթի վրա:

Աշխարհաքաղաքական ռիսկ. Աշխարհաքաղաքական, տարածաշրջանային և ներքաղաքական իրավիճակի անբարենպաստ փոփոխությունների արդյունքում հնարավոր է առաջ գան այնպիսի բացասական գործոններ, որոնք կարող են անբարենպաստ ազդեցություն ունենալ ընդհանուր մակրոտնտեսական իրավիճակի վրա, որն իր հերթին կարող է մեծացնել չաշխատող վարկերի տեսակարար կշիռը, ավելացնել պահուստավորման ծախսերը ու իջեցնել Բանկի շահութաբերությունը:

Նորմատիվային և օրենսդրական դաշտի փոփոխությունների ռիսկ. Թողարկողը գործում է ՀՀ տնտեսության կարգավորվող ոլորտներից մեկում: Նորմատիվային դաշտի փոփոխությունները կարող են դրական կամ բացասական ազդեցություն ունենալ բանկի գործունեության և ֆինանսական ցուցանիշների վրա:

Շուկայական ռիսկը տոկոսադրույքների, արժեթղթերի գների և (կամ) արժույթային փոխարժեքների տատանումների արդյունքում վնաս կրելու հավանականությունն է: Բանկը տարանջատում է շուկայական ռիսկերը առևտրային և ոչ առևտրային պորտֆելների:

Տոկոսադրույքի ռիսկը ծագում է այն հավանականությունից, որ տոկոսադրույքների փոփոխություններն ուղղակիորեն կազդեն Բանկի ֆինանսական գործիքների հետ կապված դրամական միջոցների հոսքի և նրանց իրական արժեքի վրա, ըստ այդմ, Բանկը մշտապես կրում է շուկայական տոկոսադրույքների հնարավոր փոփոխությունների ռիսկը:

Արտարժույթի ռիսկն այն ռիսկն է, որ ֆինանսական գործիքների արժեքը կտատանվի արտարժույթի փոխարժեքներում փոփոխությունների հետևանքով:

Ռիսկերի կառավարման քաղաքականությունը նախատեսում է արտարժույթային ռիսկերի սահմանափակում՝ ոչ սպեկուլյատիվ քաղաքականության արդյունքում:

Իրացվելիության ռիսկը կապված է Բանկի ֆինանսական պարտավորությունները ժամանակին մարելու կարողությամբ նորմալ և սթրեսային իրավիճակներում:

Տվյալ ռիսկը զսպելու նպատակով իրականացվում է ակտիվների և պարտավորությունների կառավարում՝ ապագա դրամական հոսքերի և իրացվելիության օրական վերահսկողություն, ֆինանսավորման տարբեր աղբյուրների ապահովում՝ ի լրումն արդեն իսկ գոյություն ունեցող բանկային ավանդների հիմնական բազայի:

Իրավական ռիսկ. Իրավական ռիսկի զսպման նպատակով՝ բոլոր ստանդարտ պայմանագրերի օրինակելի ձևերը մշակվում են Իրավաբանական վարչության կողմից համապատասխան ստորաբաժանման հետ համագործակցության միջոցով:

Տեղեկատվական տեխնոլոգիաների (SS) հետ առնչվող ռիսկերը կառավարվում են Բանկում գործող ներքին իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

1.2.3. Բանկի կանոնադրական կապիտալը

Բանկի կանոնադրական կապիտալը բաղկացած է սովորական և արտոնյալ բաժնետոմսերից: Բանկի բաժնետերերն են.

"Ըղվանսդ Գլոբալ Ինվեսթմենթս" ԷԼԷՍԻ

Սեփականության ձևը՝ ոչ պետական

Բաժնետոմսի տեսակը՝ արտոնյալ փոխարկելի՝ 333 հատ, յուրաքանչյուրը 100 (Մեկ հարյուր)

ՀՀ դրամ անվանական արժեքով և սովորական

Ռեզիդենտություն՝ ոչ ռեզիդենտ

Մասնակցության չափը. Սովորական բաժնետոմսերի 72.89%

Հայֆոստ Թրասթ Մենեջմենթ Ս. Ա. Ռ. Լ.

Սեփականության ձևը՝ ոչ պետական

Բաժնետոմսի տեսակը՝ սովորական

Ռեզիդենտություն՝ ոչ ռեզիդենտ

Մասնակցության չափը. Սովորական բաժնետոմսերի 22.11%

Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցի՝

ի դեմս Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի

Սեփականության ձևը՝ ոչ պետական

Բաժնետոմսի տեսակը՝ սովորական

Ռեզիդենտություն՝ ռեզիդենտ

Մասնակցության չափը. Սովորական բաժնետոմսերի 5%

«Կոնվերս Բանկ» ՓԲԸ կողմից մինչ այժմ թողարկվել և տեղաբաշխվել է 66,492 (Վաթսունվեց հազար չորս հարյուր ինսուներկու) հատ սովորական բաժնետոմս՝ յուրաքանչյուրը 300,000 (Երեք հարյուր հազար) ՀՀ դրամ անվանական արժեքով և 333 (Երեք հարյուր երեսուներեք) հատ արտոնյալ փոխարկելի բաժնետոմս՝ յուրաքանչյուրը 100 (Մեկ հարյուր) ՀՀ դրամ անվանական արժեքով, որոնք էլ ձևավորում են Բանկի կանոնադրական կապիտալը:

1.2.2. Պարտատոմսերին առնչվող ռիսկերի համառոտ նկարագիրը

Պարտատոմսերին առնչվող ռիսկերի մանրամասն նկարագրին կարող եք ծանոթանալ սույն Ծրագրային ազդագրի 2.1 կետում:

Շուկայական ռիսկ. շուկայական փոփոխականների (տոկոսադրույքներ, արտարժույթային փոխարժեքներ կամ տոկոսադրույքներ) տատանման հետևանքով ֆինանսական գործիքների ապագա դրամական հոսքերի կամ իրական արժեքի տատանման և դրա հետևանքով վնաս կրելու հավանականությունն է: Այն կարող է ի հայտ գալ տնտեսությունում պարտատոմսերի գնի վրա ազդող գործոնների փոփոխության արդյունքում:

Տոկոսադրույքի ռիսկ. Հայաստանի ֆինանսական շուկայում առկա տոկոսադրույքների տատանումը կարող է բացասաբար ազդել պարտատոմսերի եկամտաբերության և իրացվելիության ցուցանիշների վրա:

Արտարժույթային ռիսկ. Առաջանում է ազգային արժույթի փոխարժեքի տատանումների արդյունքում և կարող է բացասական ազդեցություն ունենալ ներդրողի՝ պարտատոմսերից ստացված եկամուտի վրա, երբ ներդրողը եկամուտը գնահատում է դրամով:

Իրացվելիության ռիսկ. Շուկայական իրավիճակի կտրուկ փոփոխության կամ բանկի ֆինանսական վիճակի վատթարացման արդյունքում կարող է առաջանալ իրացվելիության ռիսկ: Թողարկողը պարտատոմսերի իրացվելիությունը ապահովելու համար նախատեսում է գործողությունների պլան, սակայն չի կարող երաշխավորել, որ դրանք երկրորդային շուկայում ցանկացած պահին հնարավոր կլինի վաճառել կամ գնել ցանկալի գնով:

Գնաճի ռիսկ. Այն կորստի հավանականությունն է, որն առաջանում է ակտիվի կամ եկամտի նվազմամբ ներքին արժույթի արժեզրկման, ապա նաև գնաճի կտրուկ աճի արդյունքում:

Վերաներդրման ռիսկ. Այն ներդրողները, ովքեր պարտատոմսերը ձեռք են բերում դրանք մինչև մարումը պահելու նպատակով, պետք է հաշվի առնեն, որ իրենց վրա են վերցնում վերաներդրման ռիսկը, որը պայմանավորված է թողարկողի պարտատոմսերից

պարբերաբար ստացվող արժեկտրոնային եկամուտների առնվազն համարժեք եկամտաբերությամբ ներդրում կատարելու հնարավորության հավանական բացակայությամբ:

Վարկային/դեֆոլտի ռիսկ. Ներդրողները կորպորատիվ պարտատոմս ձեռք բերելիս իրենց վրա են վերցնում Թողարկողի վարկային ռիսկը, որը կապված է ապագայում Թողարկողի ֆինանսական վիճակի հնարավոր վատթարացման, արժեկտրոնների վճարման կամ պարտատոմսերի մարման անհնարինության և հավանական սնանկացման հետ:

Վարկանիշի փոփոխության ռիսկ. Այլ հավասար պայմաններում պարտատոմսերի գինը սովորաբար ուղղակի կախվածության մեջ է Թողարկողի և/կամ պարտատոմսի վարկային ռիսկը բնութագրող վարկանիշից (S&P, Moody's, Fitch): Վարկանիշի իջեցման արդյունքում, սովորաբար ընկնում է նաև պարտատոմսի գինը:

1.3. Բանկի տնտեսական գործունեության զարգացման և ֆինանսական վիճակի փոփոխության միտումները

Բանկի էական բիզնես ուղղությունների զարգացման, թվայնացման մակարդակի բարելավման, հաճախորդների սպասարկման որակի բարձրացման, կայուն շահութաբերության ապահովման, գործառնական արդյունավետության բարելավման, ինչպես նաև բնապահպանական, սոցիալական և կառավարման միջազգային պահանջներին ու չափորոշիչներին Բանկի քաղաքականության համապատասխանեցման նպատակով Բանկը ձեռնամուխ է լինելու հետևյալ նպատակների իրագործմանը.

- Ապահովել բիզնես ուղղությունների՝ առնվազն շուկային համադրելի աճ
- Նվազագույնը պահպանել հիմնական ֆինանսական ցուցանիշների գծով դիրքերը շուկայում
- Բարելավել ծառայությունների որակի գնահատման մեխանիզմները
- Ապահովել հաճախորդների բազայի աճ
- Գործարկել թվային հարթակների նոր թարմացումներ և ընդլայնել առաջարկվող ֆունկցիոնալը
- Ավելացնել «Converse Mobile»-ի ամսական ակտիվ օգտատերերի (MAU) քանակը
- Բարելավել առաջարկվող հիմնական ծառայությունների Offloading Ratio-ները

- Իրականացնել հաճախորդների գոհունակության հարցումներ և բարելավել գոհունակության ցուցանիշները
- Դիվերսիֆիկացնել եկամտի աղբյուրները՝ գործարկելով եկամտաբեր նոր պրոդուկտներ
- Բարելավել «Ծախսեր/Եկամուտներ» (CIR) ցուցանիշը
- Ավելացնել որոշումների կայացման ավտոմատացված համակարգերի միջոցով տրամադրվող վարկային պրոդուկտները
- Բարելավել ռիսկերի կառավարումը՝ ներդնելով կառավարման ժամանակակից և ավելի արդյունավետ համակարգեր
- Վերանայել Բանկի կորպորատիվ սոցիալական պատասխանատվության և բնապահպանական ռիսկերի կառավարման քաղաքականությունը և ընթացակարգերը
- Հստակեցնել և զարգացնել Բանկի համար անհրաժեշտ ESG ներդրման մոդելը:

1.4. Համառոտ տեղեկություններ Բանկի աուդիտն իրականացնող անձանց մասին

2020-2022 թթ-ի ընթացքում Բանկի արտաքին աուդիտն իրականացրել է «Էրնսթ Ընդ Յանգ» ՓԲԸ-ն:

Բանկի ֆինանսական գործունեության աուդիտն 2023 թ.-ին իրականացրել է «Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ-ն: Ազդագրի գրանցման ներկայացմանը նախորդող վերջին 3 տարվա ընթացքում թողարկողի աուդիտն իրականացրած անձանց կողմից աշխատանքից հրաժարման, վերընտրությանը չմասնակցելու, աշխատանքից ազատման դեպքեր չեն եղել:

1.5. Բանկի կառավարման մարմինների կազմի վերաբերյալ տեղեկատվություն

1.5.1. Բանկի բաժնետերերը

«Ըղվանտո Գլոբալ Ինվեսթմենթս» ԷԼԷՍԻ ՀայՓոստ Թրասթ Մենեջմենթ Ս.Ա.Ռ.Լ. Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցի՝ ի դեմս Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի			
Սեփականության ձևը	ոչ պետական	ոչ պետական	ոչ պետական
Բաժնետոմսի տեսակը	արտոնյալ փոխարկելի՝ 333 հատ, յուրաքանչյուրը 100 (Մեկ հարյուր) ՀՀ դրամ անվանական արժեքով և սովորական	սովորական	սովորական
Ռեզիդենտություն	ոչ ռեզիդենտ	ոչ ռեզիդենտ	ռեզիդենտ
Մասնակցության չափը	Սովորական բաժնետոմսերի 72.89%	Սովորական բաժնետոմսերի 22.11%	Սովորական բաժնետոմսերի 5%

Բանկը մինչ այժմ թողարկել և տեղաբաշխել է 66.492 (Վաթսունվեց հազար չորս հարյուր իննսուներկու) հատ սովորական բաժնետոմս՝ յուրաքանչյուրը 300,000 (Երեք հարյուր հազար) ՀՀ դրամ անվանական արժեքով, և 333 (Երեք հարյուր երեսուներեք) հատ արտոնյալ փոխարկելի բաժնետոմս՝ յուրաքանչյուրը 100 (Մեկ հարյուր) ՀՀ դրամ անվանական արժեքով, որոնք էլ ձևավորում են Բանկի կանոնադրական կապիտալը:

Հաշվի առնելով Բանկի կազմակերպահրավական ձևը՝ Բանկի կողմից թողարկված բաժնետոմսերը չեն շրջանառվում կարգավորող շուկայում: Բանկի բաժնետոմսերը թողարկված են անժամկետ:

1.5.2. Բանկի կառավարման մարմինները

Բանկի կանոնադրությամբ սահմանված են կառավարման հետևյալ մարմինները՝

- Բաժնետերերի ընդհանուր ժողով, այսուհետ նաև Ժողով,
- Բանկի խորհուրդ,
- Գործադիր մարմին. Բանկի Գլխավոր գործադիր տնօրեն և Բանկի Տնօրինություն:

Անուն Ազգանուն	Պաշտոն
Մարսելո Վենդե	Խորհրդի նախագահ
Մարտին Ֆրանցիսկո Էռնեսկյան	Խորհրդի անդամ
Արսեն Գամաղելյան (Տեր Հովել քահանա)	Խորհրդի անդամ
Դանիել Գիլերմո Սիմոնուտի	Խորհրդի անդամ

20.09.2024 թվականին կայացած Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովի թիվ 8 որոշմամբ խորհրդի անդամ է ընտրվել Պեդրո Միգել Վալսը:

Բանկի գործադիր մարմինը բաղկացած է ինը անդամից.

Անուն Ազգանուն	Պաշտոն
Անդրանիկ Գրիգորյան	Գլխավոր գործադիր Տնօրեն, Տնօրինության նախագահ
Հրանտ Հակոբյան	Գլխավոր գործադիր Տնօրենի տեղակալ, Ֆինանսական տնօրեն, Տնօրինության անդամ
Դավիթ Ազատյան	Հաշվապահական հաշվառման վարչության պետ, Գլխավոր հաշվապահ, Տնօրինության անդամ
Գրիգորի Զաքարյան	Ներդրումային դեպարտամենտի տնօրեն, Տնօրինության անդամ

Վահագն Մելիք-Փասրադանյան	Ռիսկերի կառավարման դեպարտամենտի տնօրեն, Տնօրինության անդամ
Արթուր Մխիթարյան	Գործառնական դեպարտամենտի տնօրեն, Տնօրինության անդամ
Բենիամին Թադևոսյան	Տեղեկատվական տեխնոլոգիաների և թվայնացման դեպարտամենտի տնօրեն, Տնօրինության անդամ
Սարգիս Խաչատրյան	Կորպորատիվ բիզնեսի գծով տնօրեն, Տնօրինության անդամ
Արամ Բալոյան	Մանրածախ բիզնեսի գծով տնօրեն, Տնօրինության անդամ

1.6. Առաջարկվող պարտատոմսերի հիմնական վիճակագրական տվյալները

«Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Բանկ) թողարկվող պարտատոմսերը անվանական, ոչ փաստաթղթային, արժեկտրոնային, միջնաժամկետ պարտատոմսեր են և պետք է տեղաբաշխվեն 3 կամ ավելի տրանշով: Պարտատոմսերի վերջին տրանշի տեղաբաշխումն ավարտվում է ոչ ուշ, քան ՀՀ ԿԲ կողմից պարտատոմսերի ազդագիրը հաստատելուց հետո մեկ տարվա ընթացքում:

Թողարկվող պարտատոմսերը տեղաբաշխվում և մարվում են՝ ԱՄՆ դոլարով թողարկվածները՝ ԱՄՆ դոլարով, ՀՀ դրամով թողարկվածները՝ ՀՀ դրամով: Ե՛վ ԱՄՆ դոլարով, և՛ ՀՀ դրամով թողարկված պարտատոմսերի դիմաց արժեկտրոնների վճարումը կատարվում է ՀՀ դրամով:

Արժեթղթերի տեսակը՝	Անվանական, արժեկտրոնային պարտատոմս
Արժեթղթերի ձևը՝	Ոչ փաստաթղթային
Արժեթղթերի անվանական արժեքը՝	100 (Մեկ հարյուր) ԱՄՆ դոլար, 50,000 (Հիսուն հազար) ՀՀ դրամ
Արժեթղթերի թողարկման ընդհանուր քանակը՝	150,000 (Հարյուր հիսուն հազար) հատ ԱՄՆ դոլարով, 200,000 (Երկու հարյուր հազար) հատ ՀՀ դրամով
Արժեթղթերի թողարկման ընդհանուր ծավալը՝	15,000,000 (Տասնհինգ միլիոն) ԱՄՆ դոլար, 10,000,000,000 (Տաս միլիարդ) ՀՀ դրամ
Արժեթղթերի յուրաքանչյուր տրանշի տեղաբաշխման ծավալը՝	Ենթակա է որոշման Բանկի Տնօրինության կողմից՝ յուրաքանչյուր տրանշի համար
Արժեթղթերի յուրաքանչյուր տրանշի տեղաբաշխման քանակը՝	Համապատասխան յուրաքանչյուր տրանշի ծավալի և անվանական արժեքի
Արժեթղթերի արժեկտրոնի տարեկան եկամտաբերությունը՝	Ենթակա է որոշման Բանկի Տնօրինության կողմից՝ յուրաքանչյուր տրանշի համար
Արժեթղթերի շրջանառության ժամկետը՝	Ենթակա է որոշման Բանկի Տնօրինության կողմից՝ յուրաքանչյուր տրանշի համար
Արժեկտրոնների վճարման հաճախականությունը՝	Ենթակա է որոշման Բանկի Տնօրինության կողմից՝ յուրաքանչյուր տրանշի համար
Տեղաբաշխման ձևը՝	Չերաշխավորված

1.7. Պարտատոմսերի առաջարկի ծրագրի համակողմանի նկարագիրը

Պարտատոմսերի թողարկման, տեղաբաշխման, շրջանառության ու մարման վերջնական պայմանները ենթակա են որոշման Բանկի Տնօրինության կողմից՝ տեղաբաշխման յուրաքանչյուր տրանշի համար:

Պարտատոմսերի յուրաքանչյուր թողարկման համար կազմվող թողարկման վերջնական պայմանները ՀՀ ԿԲ են ներկայացվում և հրապարակվում Բանկի ինտերնետային կայքում՝ www.conversebank.am տեղաբաշխումից առնվազն 2 (երկու) օր առաջ:

Պարտատոմսերի վաղաժամկետ մարում չի նախատեսվում:

Բանկի կողմից թողարկվող Պարտատոմսերը ապահովված չեն:

1.8. Այլ էական տեղեկություններ

Համաձայն «ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԲԱՆԿԱՅԻՆ ԱՎԱՆԴՆԵՐԻ ՀԱՏՈՒՑՈՒՄԸ ԵՐԱՇԽԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի գ կետի Բանկի թողարկած անվանական արժեթղթերով ներգրավված դրամական միջոցները համարվում են բանկային ավանդ, ուստի ֆիզիկական անձանց, այդ թվում՝ անհատ ձեռնարկատերերի ներդրումները Բանկի կողմից թողարկված անվանական պարտատոմսերում, ինչպես նաև պարտատոմսերից ստացվող տոկոսները երաշխավորված են նույն չափով և կարգով, ինչպես ավանդները:

Արժեկտրոնի գումարը Բանկը վճարում է պարտատոմսերի սեփականատերերին, արժեկտրոնի հաշվարկման օրը: Եթե արժեկտրոնի հաշվարկման օրը ոչ աշխատանքային է, ապա վճարման օր է համարվում դրան հաջորդող առաջին աշխատանքային օրը: Արժեկտրոնների վճարումը կատարվում է ՀՀ դրամով: ԱՄՆ դոլարով պարտատոմսերի արժեկտրոնի հաշվարկման համար հիմք է ընդունվում արժեկտրոնների հաշվարկմանը նախորդող օրվա ՀՀ ԿԲ հրապարակած ԱՄՆ դոլար/ՀՀ դրամ միջին շուկայական փոխարժեքը:

1.9. Ամփոփ ֆինանսական տվյալներ

Բանկի ամփոփ ֆինանսական գործակիցների հաշվարկման բանաձևերը ներկայացված են Հավելված 4-ում:

հազար ՀՀ դրամ

Ցուցանիշի անվանումը	31/12/2023 (աուդիտ անցած)	31/12/2022 (աուդիտ անցած)	31/12/2021 (աուդիտ անցած)
Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	14,623,669	14,098,293	4,126,909
Սեփական կապիտալի միջին մեծություն	69,313,882	56,189,344	49,500,475
Սեփական կապիտալի շահութաբերություն (ROE), %	21.10%	25.09%	8.34%
Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	14,623,669	14,098,293	4,126,909
Ընդհանուր ակտիվների միջին մեծություն	480,344,021	415,396,894	359,146,407
Ակտիվների շահութաբերություն (ROA), %	3.04%	3.39%	1.15%
Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	14,623,669	14,098,293	4,126,909
Գործառնական եկամուտ	34,788,430	32,849,952	19,286,804

Զուտ շահույթի մարժա (NPM), %	42.04%	42.92%	21.40%
Գործառնական եկամուտ	34,788,430	32,849,952	19,286,804
Ընդհանուր ակտիվների միջին մեծություն	480,344,021	415,396,894	359,146,407
Ակտիվների օգտագործման գործակից (AU), %	7.24%	7.91%	5.37%
Ընդհանուր ակտիվների միջին մեծություն	480,344,021	415,396,894	359,146,407
Սեփական կապիտալի միջին մեծություն	69,313,882	56,189,344	49,500,475
Սեփական կապիտալի մուտիպլիկատոր (EM)	6.93	7.39	7.26
Զուտ տոկոսային եկամուտ	21,596,227	16,123,507	14,389,814
Եկամտաբեր ակտիվների միջին մեծություն	414,307,882	341,419,001	293,434,485
Զուտ տոկոսային մարժա (NIM) (%)	5.21%	4.72%	4.90%
Տոկոսային եկամուտ	37,539,060	30,275,417	26,602,293

Եկամտաբեր ակտիվների միջին մեծություն	414,307,882	341,419,001	293,434,485
Եկամտաբեր ակտիվների եկամտաբերություն (%)	9.06%	8.87%	9.07%
Տոկոսային ծախսեր	15,942,833	14,151,910	12,212,479
Պարտավորություններ, որոնց գծով կատարվում են տոկոսային ծախսեր	423,018,641	395,182,592	322,606,533
Ծախսատարություն այն պարտավորությունների, որոնց գծով կատարվում են տոկոսային ծախսեր (%)	3.77%	3.58%	3.79%
Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	14,623,669	14,098,293	4,126,909
Բաժնետոմսերի միջին կշռված թիվը	66492.00	66492.00	66492.00
Զուտ շահույթը մեկ բաժնետոմսի հաշվով (EPS)	219.93	212.03	62.07
Սպրեդ (%)	5.29%	5.29%	5.28%

ԾԱՆՈՒՑՈՒՄ ՆԵՐԴՐՈՂԻՆ

ԱՄՓՈՓԱԹԵՐԹԸ ՊԵՏՔ Է ԴԻՏՎԻ ՈՐՊԵՍ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳՐԻ ՆԵՐԱԾԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ: ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԱՐԺԵԹՂԹԵՐՈՒՄ ՆԵՐԴՐՈՒՄ ԱՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԴՐՈՂԻ ՈՐՈՇՈՒՄԸ ՊԵՏՔ Է ՀԻՄՆՎԱԾ ԼԻՆԻ

ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳՐԻ ՎՐԱ: ԱՄՓՈՓԱԹԵՐԹԻ ԿԱԶՄՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁՆ ԱՄՓՈՓԱԹԵՐԹՈՒՄ ՊԱՐՈՒՆԱԿՎՈՂ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՈՉ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԿԱՄ ԱՊԱԿՈՂՄՆՈՐՈՇԻՉ ԼԻՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ (ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՄԱՍՈՎ) ԿՐՈՒՄ Է ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ, ԵԹԵ ԱՅՆ ՈՉ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԿԱՄ ԱՊԱԿՈՂՄՆՈՐՈՇԻՉ Է ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳՐԻ ՄՅՈՒՍ ՄԱՍԵՐԻ ՀԵՏ ԴԻՏԱՐԿԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ:

ԲԱԺԻՆ 3. ԲԱՆԿԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

3.8. Բանկի կառավարման մարմինները և կառավարման մարմինների անդամները

3.8.2. Տեղեկություններ թողարկողի կառավարմանը մասնակցող յուրաքանչյուր անձի վերաբերյալ

Անուն ազգանուն	Պաշտոնը	Բնակության վայրը (հասցեն)	Մասնագի- տությունը	վերջին 3 տարիներում գրադեցրած պաշտոնները, այդ թվում համատեղությամբ
Մարսելո Վենդե	Խորհրդի նախագահ	ք. Երևան, Վ. Սարգսյան 102., բն. 48		«Արմենիա» միջազգային օդանավակայաններՓ ԲԸ-ի գլխավոր մենեջեր մինչև 2019թ հոկտեմբեր «Արմենիա միջազգային օդանավակայաններ» ՓԲԸ-ի տնօրեն:

				«Պրոջեքթ Ի» ՍՊԸ-ի տնօրեն «Զվարթնոց Հենդլինգ» ՓԲԸ-ի տնօրեն մինչև 2018թ մարտ «Կոնվերս Բանկ» ՓԲԸ խորհրդի անդամ
Արսեն Գամաղելյան (Տեր Հովել քահանա)	Խորհրդի անդամ	Զվարթնոց 2. 15, բն. 18	Հոգևորական	Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ֆինանսական բաժնի հաշվապահ, Քահանա, «Կոնվերս Բանկ» ՓԲԸ խորհրդի անդամ
Դանիել Գիլերմո Սիմոնուտի	Խորհրդի անդամ	Բուենոս Այրես, Հոնդուրասի փ., 5663-GA1	Հաշվապահ	Ամերիկյան միջազգային օդանավակայանների (ԱՄՕ)՝ Զվարթնոց միջազգային օդանավակայան (Երևան, Հայաստանի Հանրապետություն) և Կարասկո միջազգային օդանավակայան (Մոնտեվիդեո, Ուրուգվայի Հանրապետություն) կոնցեսիոներ կազմակերպությունների գործունեությունը վերահսկող կորպորացիայի

				գլխավոր ֆինանսական տնօրեն. «Կոնվերս Բանկ» ՓԲԸ խորհրդի անդամ
Մարտին Ֆրանցիսկո Էռնեսկան	խորհրդի անդամ	<u>Ուրուգվայի</u> <u>Հանրապետությ</u> <u>յուն, ք.</u> <u>Մոնտեվիդեո,</u> <u>Ռուտա 101</u>	Տեղեկատվական տեխնոլոգիաների մասնագետ	Ամերիկյան միջազգային օդանավակայանների գործադիր տնօրեն, Կարասկո միջազգային օդանավակայան (Մոնտեվիդեո, Ուրուգվայի Հանրապետություն) կոնցեսիոներ կազմակերպություննե րի տնօրեն,
Պեդրո Միգել Վայս	խորհրդի անդամ	Ռումինիա, Բուխարեստ, Ստեֆան չել Մարե 1-3, Շենք 5, Բն. 255	Բիզնեսի Կառավարում	Raiffeisen Bank (Romania) S.A.' խորհրդի անդամ, HD Insurance Ltd' խորհրդի անդամ, Printec Group' խորհրդատուների խորհրդի անդամ, United Way The Netherlands' խորհրդի նախագահ
Անդրանիկ Գրիգորյան	Գլխավոր գործադիր Տնօրեն,	ք. Երևան, Սասնա Ծռեր 3, բն. 25	Տնտեսագետ	«Կոնվերս Բանկ» ՓԲԸ Գլխավոր գործադիր տնօրեն, Տնօրինության

	Տնօրինության նախագահ			նախագահ Տնօրեն, Ֆինանսական համակարգի կայունության և կարգավորման դեպարտամենտ, Գործադիր կոմիտեի անդամ, Հայաստանի կենտրոնական բանկ 2019թ. դեկտեմբերից մինչև 2022թ հունվարի 3:
Դավիթ Ազատյան	Հաշվապահական հաշվառման վարչության պետ, Գլխավոր հաշվապահ , Տնօրինության անդամ	ք. Աշտարակ, Ուշան 3 փ, տուն 11	Ճարտարագետ	«Կոնվերս Բանկ» ՓԲԸ Հաշվապահական հաշվառման վարչության պետ-գլխավոր հաշվապահ
Հրանտ Հակոբյան	Գլխավոր գործադիր Տնօրենի տեղակալ, Ֆինանսական տնօրեն, Տնօրինության անդամ	ք. Երևան Այգեստան 9փ., տուն 45	Տնտեսագետ	«Կոնվերս Բանկ» ՓԲԸ Ֆինանսական դեպարտամենտի տնօրեն «Կոնվերս Բանկ» ՓԲԸ 01.08.2019թ. Ֆինանսական դեպարտամենտի տնօրեն-գլխավոր

				գործադիր տնօրենի տեղակալ: 2008-2019.թ.թ հանդիսացել է "Հայփոստ" ՓԲԸ-ի տնօրենների խորհրդի անդամ
Գրիգորի Զաքարյան	Ներդրումային դեպարտամենտի տնօրեն, Տնօրինության անդամ	ք.Երևան Տոլբուխինի 2.34, բն 20,	Տնտեսագետ	«Կոնվերս Բանկ» ՓԲԸ Գանձապետարան, դիլինգ և ֆինանսական շուկաների վարչության պետ 09.01.2017-08.08.22թթ. «Կոնվերս Բանկ» ՓԲԸ Ներդրումային դեպարտամենտի տնօրեն 09.08.22թ-մինչ օրս
Վահագն Մելիք-Փասրադանյան	Ռիսկերի դեպարտամենտի տնօրեն, Տնօրինության անդամ	ք. Երևան Բակունցի 1-ին նրբ., 2.5, բն 54	Տնտեսագետ	ՀՀ ԿԲ Ներքին շուկաներում ռիսկերի կառավարման բաժնի պետ 11.12-12.19թթ ՀՀ ԿԲ Ռիսկերի կառավարման վարչության պետ 01.20-04.22թթ

				«Կոնվերս Բանկ» ՓԲԸ ԳԳՏ Խորհրդական 04.22.-08.22թթ «Կոնվերս Բանկ» ՓԲԸ ՖԴՏ տեղակալ- Ռազմավարության և պլանավորման վարչության պետ 08.22-12.23թթ «Կոնվերս Բանկ» ՓԲԸ Ռիսկերի կառավարման դեպարտամենտի տնօրեն 12.23-մինչ օրս
Բենիամին Թադևոսյան	Տեղեկատվական տեխնոլոգիաների և թվայնացման դեպարտամենտի տնօրեն, Տնօրինության անդամ	ք. Երևան Մուշ թաղ.122	Ֆինանսներ և վարկ	«Ամերիաբանկ» ՓԲԸ ՏՏ և ավտոմատացման վարչության ղեկավար 15.01.2008- 04.06.2018թթ «ՎՏԲ Բանկ Հայաստան» ՏՏ Դեպարտամենտի Տնօրեն 23.02.2021- 01.12.2021թթ

				«Կոնվերս Բանկ» ՓԲԸ SS Դեպարտամենտի Տնօրեն 25.04.22-մինչ օրս
Արամ Բալոյան	Մանրաձախ բիզնեսի գծով տնօրեն, Տնօրինության անդամ	ք.Երևան Նանսենի փ., 152, 55բն.	Քաղաքային տնտեսության էկոնոմիկա և կառավարում	Վելոքս Միություն, Գործադիր տնօրեն 2019-2022թթ. «Ֆաստ Կրեդիտ Կապիտալ» ունիվերսալ վարկային կազմակերպություն ՓԲԸ 2020 փետրվար- 2020 հուլիս, «Կոնվերս Բանկ» ՓԲԸ Մանրաձախ բիզնեսի գծով տնօրեն 03.03.22թ-մինչ օրս
Արթուր Մխիթարյան	Գործառնական դեպարտամենտի տնօրեն, Տնօրինության անդամ	ք.Երևան Շովրոյան 14, բն 6	Ընդհանուր տնտեսագիտություն	«Արդշինբանկ» ՓԲԸ Հեռահար վաճառքների վարչության պետ 04.18-12.19թթ. «Իզիվիեյ» ՍՊԸ Տնօրեն 12.19-05.21թթ. «Կոնվերս Բանկ» ՓԲԸ

				ԳԳՏ Խորհրդական 16.08.21-08.03.22թթ «Կոնվերս Բանկ» ՓԲԸ Գործառնությունների և ծառայությունների գծով տնօրեն 09.03.22թ-մինչ օրս
Սարգիս Խաչատրյան	Կորպորատիվ բիզնեսի գծով տնօրեն, Տնօրինության անդամ	Ք. Երևան, Շերամի 105, բն 69	Տնտեսագետ	«Կոնվերս Բանկ» ՓԲԸ՝ կորպորատիվ բիզնեսի գծով տնօրենի տեղակալ- խոշոր բիզնեսի ֆինանսավորման վարչության պետ «Կոնվերս Բանկ» ՓԲԸ՝ կորպորատիվ բիզնեսի գծով տնօրեն
Կարեն Ղահրամանյան	Ներքին աուդիտի ղեկավար	Ք. Երևան. Գայի 2, բն. 130	Տնտեսագետ	«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ Ներքն վերահսկողության ղեկարարամենտի տնօրեն